

- 3. Թաղականին Կնիկը (1921)
- 4. Միջնորդ Տէր Պապան (1920)
- 5. Դատաստանական Խորհուրդին Առջեւ (1921)
- 6. Մատնիչը (1920)
- 7. Առաքելութիւն մը ի Ծապլլար (1913)
- 8. Ընկեր Փանջունի Վասպուրականի մէջ (1914)
- 9. Միքէի Սիրարկածը (1920)
- 10. Չարըր Ավրամ (1920)
- 11. Ճեպընթաց Նորածինը (1920)
- 12. Ընտանիք, պատիւ, բարոյական (Արեւելք)
- 13. Ես դրսեցի չեմ առնեք (Ժամանակ)
- 14. 17 թիւ խաֆիէն (Վերջին Լուր)
- 15. Կանանչ հովանոցով կիւնը (Վերջին Լուր)
- 16. Կաւէ հերոսներ (Վերջին Լուր)
- 17. Տարիթա (Վերջին Լուր)
- 18. Ընկեր Փանջունի Տարագրութեան մէջ (Նաւասարդ)

19. Հայ կուլտուրականները (Շաւիղ)

Այս ցանկը կազմուելէ յետոյ էր, որ «Արեւ» մէջ հրատարակեց Հայ Տիարքօրան: Ասոնց մէկ մասը արդէն հատոր անցած է, ու մէկ մասն ալ դեռ կը մնայ թերթերու հաւաքածոներուն մէջ:

Կան նաեւ ասոնց մէջ օտար լեզուներու թարգմանուածներ: «Ապաիւլ Համիա եւ Շէրլօք Հօլմս»-ը ու Սալիհա Հանըմ»-ը այն առեւ թարգմանուեցան նաեւ Ֆրանսերէնի, յունարէնի եւ տաճկերէնի: Իսկ Ընկեր Փանջունի ընկերվարական նամականին լոյս տեսաւ ցարդ Ֆրանսերէն, ռուսերէն եւ պուլկարերէն լեզուներով:

ԻՐ ՎԻՊԱԿՆԵՐԸ

Իր վիպականերն ալ կարեւոր թիւ մը կը կազմեն, ու անոնց մէջ ալ կան մեր գրականութեան հետ ապրելիք էջեր: Ահա իր վիպակաները —

- 1. Վաշխառուն (Հայրենիք)
- 2. Գործ եփող մը (Հայրենիք)
- 3. Ազգային բարերար (Շիրակ)
- 4. Ոսկեմուլ (Շիրակ)
- 5. Գործի մարդիկ (Անահիտ)
- 6. Մուլէտ (Անահիտ)
- 7. Բարի դահճը (Անահիտ)

- 8. Մօսա Քլէսիմ (Անահիտ)
- 9. Համբարձում աղա (Բանբեր)
- 10. Բրօթականութիւն (Նոր Կեանք)
- 11. Վաճառականի մը նամականը (Մանաւայ)
- 12. Ճուղուարիսթ եւ Ընկ. (Կառափնատ)
- 13. Վարպետ Պողիկարպոս (Վերջին Լուր)
- 14. Յեղատիտութեան Մակարոյձները (1920)
- 15. Ազգային Երեսփոխաններ (Մանաւայ)
- 16. Լեւոն Շաթրեան (1920)

ԻՐ ԹԱՏԵՐԱՆՈՒՆԵՐԸ

Ասեմ չունեցաւ իր տաղանդին արժանի թատերախաղեր գրելու: Ու գրածներուն թիւը չորսը չանցաւ: Ամենէն յաջողը Չարըր Արքիւն Աղան է՝ 1906-ին գրուած Միքայէլ Կիւրճեանի աշխատակցութեամբ: 1909 հրատարակեց Չարըրի կատախաղը, շատ միջակ բան մը: 1913-ին գրեց Սահմանադրութեան 69-րդ յօդուածը, որ դեռ այս տարի լոյս թեսաւ Փարիզի Կալիօշին մէջ: Գրած է նաեւ Վարդան Մամիկոնեան ազգային ողբերգութիւնը:

«Մահամաղբութեան 69-րդ յօդուածը» զուրկ է թատերական կառուցուածքէ, ու գրուած է պարզապէս օրուան պահանջով: «Վարդան Մամիկոնեան»-ն ալ շատ չի տարբերի սովորական «Վարդան»-ներէն, ու ան ալ գրուած է պարզապէս «փողի համար»:

ԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

— Դժուար պիտի հաւատան, — ըսաւ Օտեան, — երբ ըսեմ թէ կեանքիս ամենէն սիրական գրադումն են եղած ուսումնասիրութիւնները, կարդալն ու գրելը հաւասարապէս: Մեծագոյն հաճոյքս է եղած պարապիլ պատմական ուսումնասիրութիւններով, մանաւանդ Ս. Գրքի վերլուծութեամբ ու քննութեամբ: Ասոր՝ դժուար թէ հաւատան զիս չճանչողները:

Ու արդարեւ Օտեան, Փանջունին ու Իգնատ աղան ստեղծողը, մոլի ընթերցող մըն էր Ս. Գրքի նուիրուած քննական ուսումնասիրութեանց: Ու ամէն մէկ կարդացածը կը բաղդատէր Ս. Գրքին բացատրութեանց հետ: Պուքրէչի մէջ անգամ եկեղեցիէն «Աստուածաշունչ» մը տուն բերել տուաւ՝ Ռեմանի մէջըբերումները բնագրին հետ բաղդատելու: